ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 622 - Ա

12 նոյեմբերի 2021 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՈՎԱԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԻ ՄՈՒՐԱՑԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՏՈՒՇ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՐՄԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 69-րդ կետի, 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված 1-ին կետի պահանջներն ու Արտուշ Հայրապետյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արտուշ Հայրապետյանին տրամադրել 2021 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդը՝ 2021 թվականի նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 17-ը ներառյալ (25 աշխատանքային օր):

2. Արտուշ Հայրապետյանի արձակուրդում գտնվելու ընթացքում «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղի

Մուրացանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների և պարտականությունների իրականացումը վերապահել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Արմինե Մկրտչյանին /առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ/:

12.11.2021

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ք.Գավառ